**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

19 օգոստոսի 2021 թվականի N 230

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀԱՏՎԱԾՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 1730-Ն որոշումները, ինչպես նաև հիմք ընդունելով ավագանու 25.12.2020թ-ի թիվ 103-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վարդան Աղվանի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12102020-10-0004 վկայական) համայնք Եղեգնաձոր ք., Երևանյան խճուղի թիվ 17/1 հասցեում գտնվող, 10-001-0174-0041 կադաստրային ծածկագրով, 62.6 քմ մակերեսով պահեստի սպասարկման համար առանձնացված նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողատարածքի 0.12 հա մակերեսից առանձնացվող 0.03236 հա մակերեսով հատվածին տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Եղեգնաձոր ք., Երևանյան խճուղի թիվ 17/1/1, իսկ առանձնացվող 0.08764 հա մակերեսով հատվածին տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Եղեգնաձոր ք., Երևանյան խճուղի թիվ 17/1/2:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021թ. օգոստոսի 19
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

19 օգոստոսի 2021 թվականի N 229

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀԱՏՎԱԾՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 1730-Ն որոշումները, ինչպես նաև հիմք ընդունելով ավագանու 25.12.2020թ-ի թիվ 103-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վարդան Աղվանի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05082021-10-0013 վկայական) համայնք Եղեգնաձոր ք., Երևանյան խճուղի թիվ 17/2 հասցեում գտնվող, 10-001-0174-0042 կադաստրային ծածկագրով, 18.6 քմ մակերեսով ջրավազանի և 192,5 քմ մակերեսով ծածկի սպասարկման համար առանձնացված նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողատարածքի 0.35 հա մակերեսից առանձնացվող 0.07220 հա մակերեսով հատվածին տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Եղեգնաձոր ք., Երևանյան խճուղի թիվ 17/2/1, իսկ առանձնացվող 0.27780 հա մակերեսով հատվածին տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Եղեգնաձոր ք., Երևանյան խճուղի թիվ 17/2/2:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. օգոստոսի 19
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2021 թվականի N 228

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ համայնք Եղեգնաձոր ք., Մոմիկի փողոց 6/9 հասցեում կառուցված ինքնակամ կառույցի (բնակելի տան) պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցի և դրանով զբաղեցված ու սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի սեփականության իրավունքով տրամադրումը չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի, ''Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 912-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ.-ի թիվ 2387-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 30.11.2006թ.-ի թիվ 1730-Ն որոշումների պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 25.12.2020թ.-ի թիվ 103-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնք Եղեգնաձոր ք., Մոմիկի փողոց 6/9 հասցեում գտնվող ըստ չափագրման հատակագծի 50.18 քմ մակերեսով կառուցված գործառնական նշանակությամբ՝ ինքնակամ բնակելի տունը և դրա սպասարկման համար առանձնացված 0.00607 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողատարածքը համարել Եղեգնաձոր համայնքի սեփականություն և այն ճանաչել

[illegible] կատարել կառույցն իրականացրած Վիոլետտա Արտաշեսի Վարդանովային (նույնականացման քարտ՝ 005557799, տրված 18.01.2017թ., 037-ի կողմից):

3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օրինականացման համար սահմանված չափով և կարգով գումարների վճարումից և այդ փաստը հավաստող գրավոր ապացույցը /վճարման անդորրագիր, տեղեկանք և կամ քաղվածք/ ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում Եղեգնաձորի համայնքապետարանի անունից Գնորդի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել համայնքի ղեկավարին ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում, կամ դատական կարգով՝ երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին անձին տեղեկացնելու օրվանից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2021թ. օգոստոսի 19
ք.Եղեգնաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am


**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

18 օգոստոսի 2021 թվականի N 227

*ԱՆՉԱՓԱՀԱՍ ԴԱՎԻԹ ԴԱՎԹԻ ԷԼԲԱԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՂԵԿԱՎԱՐ-ԴԱՍՏԻԱՐԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 10.09.2015թ.-ի թիվ 1044 որոշմամբ սահմանված կանոնակարգը և Հայաստանի Հանրապետության ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Եղեգնաձորի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Հ. Կոստանյանի 09.08.2021թ.-ի թիվ 82-4357 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի բնակիչ (հասցեն՝ համայնք Եղեգնաձոր ք., Նարեկացու փողոց տուն 15) անչափահաս Դավիթ Դավթի Էլբակյանի (ծնված՝ 24.09.2003թ.) նկատմամբ պրոֆիլակտիկ դաստիարակչական միջոցառումները պատշաճ կերպով կազմակերպելու համար մինչև 25.09.2021թ.-ը ղեկավար-դաստիարակ նշանակել Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ սոցիալական աշխատող Քրիստինե Պողոսյանին:

2. Հանձնարարել իրականացնել մշտադիտարկում և կազմել համապատասխան արձանագրություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

2021թ. օգոստոսի 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

13 օգոստոսի 2021 թվականի N 226

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 25.12.2020թ-ի թիվ 103-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արամ Համլետի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրացման 2288681 վկայական) հողատարածքի՝ ք . Եղեգնաձոր Նարեկացի N-Հ-013 հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք . , Զորավար Անդրանիկի փողոց, 33/3:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. օգոստոսի 13
ք.Եղեգնաձոր